

ԿՐԹՆՆԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՉԱՅՆ ԵՂԵԻ ՅԱՄՊՈՅ ԱՆՏԻ

Դա է որդի իմ սիրելի դժա լուարուք:

Մկ. 9. Գլ. 6.

Վարդավառի տօնի կենդրոնը կազմում է պայծառա-
կերպութեան պատմութիւնը, որը տարբերում է աւե-
տարանական միւս հրաշալի պատմութիւններից մի խիստ
բնորոշ կողմով: Այստեղ հրաշքը կատարում է Փրկչի
անձնաւորութեան հետ. հրաշալի երևոյթին ականատես
և ականջալուր են Մեծ Վարդապետի երեք աշակերտները
Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս: Սուքա տեսնում են սարի
վրայ իրենց Վաղապետին պայծառափայլ և փառաւոր-
ուած մարմնով: Նրանք տեսնում են Մովսէսին և Եղիաին
իրենց Տիրոջ հետ խօսելիս, և հիասքանչ դրութեան մէջ,
որտեղ զարմանքն ու երկիւղը միախառնւում և յափըշ-
տակում են մարդուն, լսում են ամպից մի ձայն «Դա է
իմ սիրելի որդին դրան լսեցէք»: Այս սքանչացման մէջ
Պետրոսը անզիտակցօրէն թռթոկել է «Վարդապետ. լաւ է
այստեղ մեզ համար. երեք տաղաւար շինենք մին քեզ, մին
Մովսիսին և միւսը Եղիայի համար: Յետոյ այս կէս գի-
տակից դրութիւնից ուշքի գալով՝ յանկարծ նայում տես-
նում են միայն Յիսուսին իրենց հետ: Անցնում է յափըշ-
տակութեան վայրկեանը և Փրկչի սիրելի մտերիմ աշա-
կերտներն անգամ, որոնք ականատես և ականջալուր էին
այս տեսարանին, չեն կարողանում առ ժամանակ հասկա-
նալ այս հրաշալի երևոյթը. հապա ինչպէս մենք, որ դա-
րերով և քաղաքակրթութեամբ այնքան հեռացել ենք այս
անցքից, պիտի կարողանանք հասկանալ և գնահատել
մենք որ ամեն մի հրաշալի պատմուածքի վրայ սովոր

ենք նայել կասկածանքով քննադատօրէն, ի՞նչպէս պիտի ըմբռնենք և տօնենք այս երևոյթը:

Բայց ի՞նչ կայ այստեղ անհաւատալի. եթէ բարեխիղճ լրջութեամբ քննենք, կտեսնենք, որ այս պատմութեան ծանրութեան կենդրոնը Փրկչի վերոյիշեալ երեք աշակերաների այն հոգեկան ապրումն է, որով նրանք լեռան վրայ իրենց Վարդապետին տեսնում են պայծառակերպ և երկնքից ձայն են լսում, թէ նա Աստուծոյ որդին է, որ օրէնքը յանձին Մովսիսի և մարգարէութիւնը յանձին Եղիայի եկել են վկայելու, որ իրենց գործունէութիւնը կատարումն ու լրումն է ստացել Փրկչի աշխարհ գալովը: Անշուշտ Փրկչի զօրեղ անձնաւորութեան ազդեցութեան տակ նրա աշակերտները զանազան հանդիսաւոր բոլաներում պէտք է ձեռք բերած լինէին վերոյիշեալ գիտակցութիւնը, որը յետոյ հաւատ դարձաւ և քրիստոնէական եկեղեցու հիմքը կազմեց: Եթէ 19-րդ դարում Նապոլէոնի ժամակակիցներից շատերը և մանաւանդ նրա զօրավարներն ու զինւորները իրենց կայսրին, որ շատ յաճախ հանդէս էր գալիս իբրև իր բռնաւոր կամ արկածախնդիր մի Կորսիքացի, համարում էին անպարտելի մի ոգի, պատերազմի Աստուած, ինչո՞ւ չպիտի Փրկչի աշակերտները Աստուածայինը յանձին Յիսուսի մարմնացած տեսնէին, չէ՞ որ իրենց հոգու և երկնքի ձայնը յետագայում նաև պատմութիւնը վկայեցին, որ հազարաւոր Նապօլէօններից աւելի վեհ մի անձնաւորութիւն էր կանգնած նրանց առաջ: Եւ եթէ այդ աշակերտները ոչ տեսել են պայծառակերպ և փառաւոր դէմքը իրենց վարդապետի և ոչ էլ լսել են երկնքի վկայող ձայնը, հապա ի՞նչպէս, ո՞ր հոգեբանութեամբ, ի՞նչ զրդիչներով նոքա դուրս եկան իրենց ժողովրդի և ամբողջ հեթանոս աշխարհի առաջ, իրենց կեանքի գծով յայտարարելու, որ տեսել և լսել են այն ամենը. հապա ի՞նչպէս կազմուեց այն հաւատը թէ՛ իրենց վարդապետը աշխարհի Փրկիչն է և Աստուծոյ սիրելի որդին, որը նախ թափօր լերան վրայ և սպա յարութիւնից յետոյ շատ յաճախ յայտնուել է իրենց:

Վարդապետին հայ եկեղեցին ամենայն իրաւամբ տօնում է Փրկչի երեք աշակերտներէ հոգեկան այն վեհ ապրումը, որով նրանք ձեռք են բերել այն լուսաւոր գիտակցութիւնը և հաստատուն հաւատք, թէ իրենց Վարդապետը վեհ լուսաւոր մի անձնաւորութիւն է, թէ նա երկնքի և իրենց հոգու ձայնով վկայուած Աստուծոյ որդին է: Այս այն հաւատն է, որ առկայծեց նախ Պետրոսի մէջ Կեսարիայի ճանապարհին և դրանից վեց օր յետոյ յայտնուեց ահա այս վեհ տեսարանով լեռան գագաթին:

Եւ քի ի սկական քրիստոնեան չի ցանկանայ այս ջերմագին օրերում գէպի լեռների բարձունքը գլխել, դէպի ջինջ ու լուսաւոր միջնորարը, այնտեղ տիեզերքի պայծառ գեղեցկութեան և իւր կենդանացած հոգու անհուն խորութեան մէջ դանելու իւր Աստուծուն և իւր Փրկչին, ինչպէս այս երեք աշակերտներն արին: Անշուշտ հարկաւոր չէ այդ բարձունքի վրայ տաղաւարներ շինել ընդմիջաբնակուելու համար. դա կլինէր ճգնաւորական իդէալ. այլ հարկաւոր է կազդուրած այդ Աստուածային յայտնութեամբ, ցած իջնել և աշխարհին՝ թէկուզ իրենց կեանքի գծով՝ յայտնելու թէ՛ ի՞նչպէս են դատել իրենց Աստուծուն և ի՞նչն է լինելու իրենց կեանքի նպատակը:

Մանդիլա 21 յունիս.

Մ. Խոսիկեան.

Հ Ի Լ Լ Ե Լ

Եթէ վերցնենք հրէից պատմութեան փոթորկալից շրջանը, երբ Իսրայէլը կործանում էր իւր քաղաքական, անկախ կեանքը, երբ յուսանատուութեան մէջ ամուր կերպով բռնում էր ամէն մի խաբուսիկ երևոյթ, որը խոստանում էր իրեն հնութեանը հաւասար իրաւունքով արժանի գոյութիւն, այդ ժամանակ մենք տեսնում ենք Յուդայի մէջ բազմաթիւ, իրար հետ կուռղ աղանդներ: Փարիսեցիք, Սադուկեցիք և այլն. — ահա կրօնական այն մեծ կուսակցութիւնները, որոնք գոյութիւն ունէին Հրէաստանում, կուսակցութիւններ, որոնք տաք կերպով կաւում էին միմեանց դէմ: